

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Մարտակերտի շրջանի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար 2017-2018 ուս. տարի 05.09.2017թ.

1. Մեծշենի մ/դ – պատմություն - 10 ժամ
2. Գետավանի մ/դ- մաթեմատիկա- 6 ժամ, հայոց լեզու և գրականություն - 6 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂԿրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. 25-26, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. 23-24 համարներում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատետեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂԿ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:  
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:  
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում:  
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:  
Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 29-ից - հոկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում. մանրամասը տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց: